Գուրգեն Մահարի

Հողի երգը

Մեծ քաղաքների խօլ խուժը
Կանչում է նորից անհանգիստ,
Մշուշում թարթում է կամուրջը,
Հայեացքը յառած իմ յանդին:

Իսկ անդին գիւղերն իմ անթեւ,
Իսկ անդին հիւանդ մի տենդով
Հիւղերն են իմ ճամբան բանտել,
Հողերն են դժգոհ մրթմրթում:

Բաւական է որքան շրջեցիր
Քաղաքից-քաղաք երգելով .
Տե՛ս, ձէթի ծրագը շիջել է,
Սերմեր են մեռնու հերկերում:

Կոպերիդ տակ կապոյտ երիզ,
Մազերիդ՝ բոյրը գինետան,
Իմ կորած զաւա՛կ, էլ հերի՛ք
Մնաս քո երկրին օտար:

Դու այստեղ ուրի՛շ կը լինես,
Կը գտնես քո երգի հունը .
Կը սիրէ քո նոր երգերը

Բարձրացող զարթ սերունդը:

Քեզ այստեղ ճանաչում են նրանք,
Երգում են քո նոր երգերը,
Իսկ դու թափառում ես մռայլ,
Ու նեղ է թում երկիրդ:

Միեւնոյն է՝ որքան էլ փախչես,
Ցնորես քաղաքներ հսկայ,
Քեզ հո՛ղդ պիտի ճանաչէ,
Քեզ հո՛ղդ պիտի զգայ:

Եւ Հայաստանն է քո հերկը,
Ուր պիտի երգդ զընգայ .
Դու երգի՛ր, պոէ՛տ, քո երգը,
Եւ պայծառ եղիր, եւ զգաստ:

«Մրգահաս», 1925